ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարտո ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար կտրամադրվեն փողոցներում տեղադրելու համար 144 /հարյուր քառասունչորս/ հատ փոքր աղբաման: Աղբամանները կլինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի: Աղբամանների գույները և այլ մանրամասներ համաձայնեցնել գնորդի հետ: Աղբամանները կլինեն չօգտագործված: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները կհամապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանները կտեղափոխվեն և կտեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: Աղբամանը կլինի հորիզոնական առանցքի շուրջ պտտվող և պատրաստված կլինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբարկղի հիմքի /ամրացման անցքերով/ չափը 200x200 մմ, վերևի բացվածքի չափը 260x260 մմ, բարձրությունը 400մմ: Ծածկը կլինի կորաձև, բարձրությունը հատակից 760մմ /գնորդի պահանջով ծածկի թեքությունը ենթակա է փոփոխման/: Աղբարկղը կպատրաստվի 2մմ հաստությամբ մետաղական թիթեղից: Աղբարկղ հենքը կպատրաստվի 40x20x2 մմ չափի քառանկյուն խողովակով: Աղբամանին կլինեն անցքեր գետնին ամրացնելու համար: Աղբամանները կամրացվեն խարսխով, մետաղական դետալներով /շտիր/: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է և մետաղական դետալները ամրացված են եռակցման միջոցով, բոլոր միացման կետերն ու եռակցված հատվածները կլինեն հղկված և լավորակ մշակված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանները կունենան առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ Աղբամանը կլինի եզակի տարբերանշանով «Շենգավիթ» կամ «Շ» դաջվածքով, համաձայնեցված վարչական

	շրջանի ղեկավարի հետ և այն չի կրկնվի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРАРТО ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	